

L Թ

ՍԱԼԹԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԸ ԵՒ ԱՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ

1. Սալթի ցկարագրութիւնը.

Էս-Սալթը ստուգիւ խիստ հին քաղաք մ'է. բայց իր նոյնացումը տեղի տուած է ծանր վէճերու: Եւսերիոս կ'ըսէ թէ Ռամովգ՝ «քաղաք նուիրական և ապաստանարան Գաղ ցեղին, Փիլատելիիոյ արեւմուտքը 15 մղոն հեռի աւան մ'է» (Տե՛ս Onomasticon): Պատմիչը առանց ո՛րեւէ տարակուսի Ռամովգը ցոյց կու տայ Գաղաազի մէջ (Գ. Թագ. ԻԲ. 3), կամ Գաղաազի Մասփան (Դաս. ԺԱ. 29) մինչև Էս-Սալթ՝ որ 24 քիլոմէթր հեռի է Ամմանէն դէպ ի արեւմուտք-հիւսիս-արեւմուտք: Բայց այս նոյնացումը սխալ է, վասն զի աստուածաշնչական բոլոր տուրքներուն համաձայն, Գաղաազի Ռամովգը կը գտնուի հիւսիսային կողմը Յարովկի, Նահր էլ Ջերֆայի և նոյն իսկ Մահանայիմի՝ Խերպիդ էլ Մահնեհի հիւսիսը:

Էս-Սալթ անունը կը ծագի լատին saltus բառէն որ կը նշանակէ անտառ. իսկ յոյները կ'ըսեն անոր Salton Hieraticon, որ կը նշանակէ նուիրական Սալթը: Գէորգ Կիպրացին որ կը յիշատակէ զայն այս անուամբ, կը դնէ զայն Գ. Պաղեստինի մէջ: Մի և նոյն հեղինակը այս քաղաքը կ'անուանէ «Salton Bataneos Արաբիոյ մէջ»: Արդ, Էս-Սալթի արեւմտեան կողմը վեց քիլոմէթր հեռի տակաւին կը գտնուի Khirbet Bataneh՝ զոր կը նոյնացնեն Betonim աստուածաշնչական քաղաքին հետ (Յնւ. ԺԳ. 26):

Որստ հաւանական է որ Salton հին Gadara քաղաքն է զոր Յովսեպոս կը յիշէ իբր քաղաք Արաբիոյ: Ուրիշ հատուածի մը մէջ ան ցոյց կու տայ թէ Nimrimէն շատ հեռի չէ: Պաղոմէոս ալ կը յիշէ Gadare քաղաք մը Սկիւթուպոլսի եւ Պելլայի հետ, որ հրեայ պատմիչին յիշածէն տարբեր քաղաք մը չի կրնար ըլլալ: